ԵՐԳԸ

ՋԱՅՆԱԳՐԵԱԼԻՔ

ԻԺԱՄԱԳՐՈՑ

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՑՅ Ս· ԵԿԵՂԵՑԻՈՑ

ԻՎԱՂԲՐՁԱՊԱՏ

ԻՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՑ ԿԱԹՈՒՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ·

1877 — ՌՅԻԷ

ՀՐԱՄԱՆԻ

Տ՝ Տ՝ ԳԷՈՐԳԱՅ Դ՝

ՎԵՀԱՓԱՌՔ ԵՒ ՍՐԲԱԶԱՆԵԼՈՑՆ ՎԵՐՔՈՒԱԿԱՒՈՒՄՔ

ԸՍՏ ԿԱՐԳՈՑ ՀԱՅՈՑ։

ԵՐԵՎԱՆԻ ԿՈՄԻՏԱՍԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՆՍԵՐՎԱՏՈՐԻԱ
ՀԱՅ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՖՈԼԿԼՈՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ

«ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՎԵՐԱԾՆՈՒՆԴ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

ԵՐԳՔ
ՁԱՅՆԱԳՐԵԱԼՔ
Ի ԺԱՄԱԳՐՈՑ
ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ Ս. ԵԿԵՂԵՑԻՈՑ



ԵՐԵՎԱՆ – 2017

ՀՏԴ 783
ԳՄԴ 85.31
Ե 778

Երգք ձայնագրեալք ի Ժամագրոց Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ. —
Ե 778 Եր.: «Մշակութային վերածնունդ» հիմնադրամ, 2017.— 960 էջ:

«Երգք ձայնագրեալք ի Ժամագրոց» (Ձայնագրյալ Ժամագիրք) հատորը հայ ավանդական՝ մոնոդիկ (միաձայն) եկեղեցական երաժշտության ստվարածավալ ձայնագրյալ ժողովածուներից է: Լույս է տեսնել 1877 թ. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, հայկական նոտագրությամբ, Գևորգ Դ կաթողիկոսի հրամանով և հովանավորությամբ: Հատորում ընդգրկված է Հայ Եկեղեցու ամենօրյա ինը ժամերգությունների ողջ եղանակավոր (երգվող) բազմաժանր նյութը:

Ներկա հրատարակությունը բնագրի փոխադրությունն է հայկական նոտագրությունից եվրոպականի, որ կատարվել է Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի Հայ երաժշտական ֆոլկլորագիտության ամբիոնում:

«Երգք ձայնագրեալք ի Ժամագրոց» ժողովածուն հարստագույն նյութ է բովանդակում հայ եկեղեցական երաժշտությունը հետազոտողի համար: Միաժամանակ, այս հատորից, որպես ստեղծագործական ներշնչանքի անսպառ աղբյուր, կարող են օգտվել թե՛ կատարողները, թե՛ կոմպոզիտորները: Այն կարող է գործի դրվել նաև ուսումնառության գործընթացում երաժշտական (և ոչ միայն) ուսումնական տարբեր հաստատություններում:

Ձայնագրյալ ժամագրքի սույն հրատարակությունը նախատեսված է երաժիշտների, ինչպես նաև բոլոր նրանց համար, ովքեր հետաքրքրվում են հայ եկեղեցական երաժշտությամբ, և որոնց հասու է եվրոպական նոտագրությունը:

ՀՏԴ 783
ԳՄԴ 85.31

ISBN 978–9939–1–0508–6

© Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիա, 2017

℗ «Մշակութային վերածնունդ» հիմնադրամ, 2017

YEREVAN STATE CONSERVATORY AFTER KOMITAS
DEPARTMENT OF ARMENIAN MUSICAL FOLKLORISTICS

"CULTURAL RENAISSANCE" FOUNDATION

NOTATED CHANTS FROM THE BREVIARY OF THE ARMENIAN HOLY CHURCH



YEREVAN – 2017

The volume *Notated Chants from the Breviary of the Armenian Holy Church* is one of the voluminous notated miscellanies of the Armenian traditional monodic Church music. It was published in 1877 with Armenian notation in the Mother See of Holy Etchmiadzin by support and order of His Holiness Gevorg IV, Catholicos of all Armenians. The volume includes the entire multi-genre chants of the daily nine Offices of the Armenian Church.

The present transcription of the volume *Notated Chants from the Breviary* from Armenian notation into the Western musical notation was performed in the Department of Armenian Musical Folkloristics of the Yerevan State Conservatory after Komitas.

The *Notated Breviary* contains rich material for researchers of the Armenian Church music. At the same time, it can be used as an inexhaustible source of creative inspiration both by performers and composers. It can also be used as manual during the educational process in diverse musical (and not only) colleges.

This edition of the *Notated Breviary* is intended for musicians, as well as for all those who are interested in the Armenian Church music and who are acquainted with the Western musical notation.

© Yerevan State Conservatory after Komitas, 2017

℗ "Cultural Renaissance", 2017

ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ
ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ

SUPREME PATRIARCH
CATHOLICOS
OF ALL ARMENIANS
MOTHER SEE OF HOLY ETCHMIADZIN

ԳԻՐ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ

Ուրախությամբ ողջունում ենք նոտագրված ժամագրքի հրատարակությունը, որը ինչպես մեր եկեղեցական, այնպես և՝ մշակութային կյանքում սպասված ձեռնարկ է և կարևոր նպաստ՝ հոգևոր մեր սրբազան ժառանգությունը արժևորելու գործում:

Ժամագրքում ներառնված են հոգևոր-պաշտամունքային երգեր ու աղոթքներ, որոնք հեղինակել են մեր Եկեղեցու սուրբ հայրերը և սաղմոսների, սուրբգրական հատվածների հետ կարգավորել որպես ժամասացություններ: Դարերի խորքից մեզ հասած հոգևոր մեր ժառանգությունը պահպանվել է հոգածությամբ և սերնդեսերունդ մեր եկեղեցիներից՝ որպես փառաբանություն ու աղոթք, վերառաքվել առ Աստված՝ հայցելով Բարձրյալի ողորմությունն ու բարեխնամ հովանին մեր ժողովրդին և աշխարհին:

Ժամագրքի նոտագրությունը, որը խնամքով ու նվիրումով իրականացվել է Երևանի պետական կոնսերվատորիայի ժողովրդական ստեղծագործության ամբիոնում, կարևոր ձեռնարկ է եկեղեցականների ու երաժշտագետ ուսումնասիրողների համար. այն առավել ճանաչելի պիտի դարձնի մեր հոգևոր երգեցողությունը նաև մշակութային աշխարհում:

Հայրապետական Մեր օրհնությունն ու գնահատանքն ենք բերում ժամագրքի նոտագրությունն իրականացրած շնորհալի երաժիշտներին, գրքի հրատարակությունը հովանավորած «Մշակութային վերածնունդ» հիմնադրամին և բոլոր աջակիցներին:

Հայրապետիս հայցն ու մաղթանքն է, որ Բարին Աստված ամենախնամ Իր Սուրբ Աջի հովանու ներքո պահպանի մեր ժողովրդին, օրհնի բարի ու հավատավոր ընթացքը Մեր զավակների՝ ի պայծառություն մեր Սուրբ Եկեղեցու և ի փառաբանություն Իր Սուրբ Անվան:

Օրհնությամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ
ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ

SUPREME PATRIARCH
CATHOLICOS
OF ALL ARMENIANS
MOTHER SEE OF HOLY ETCHMIADZIN

MESSAGE OF BLESSING

It is with great joy that We welcome the publication of the Book of Hours with music sheets. The current edition of the Prayer book has been long anticipated in ecclesiastical as well as in cultural life. It is also an important input towards evaluation of our spiritual legacy.

The Book of Hours includes sacred chants and prayers written by the Holy Fathers of our Church and set in order as Divine Offices alongside with psalms and passages from the Holy Scriptures. Our spiritual legacy, passed down to us throughout centuries, has been safeguarded with vigilance and from generation to generation offered to God as a glorification and prayer, with a plea addressed to God Most High for his mercy and protection for our people and the entire world.

The music notation of the Book of Hours, carried out with care and devotion by the professors of the Chair of Folk Music of Yerevan State Conservatory, is an important manual for clergymen and musicologists and it shall make our sacred chants better known also in the cultural sphere.

We convey our Pontifical blessings and appreciation to the gifted musicians who realized the music notation of the Book of Hours; to the Fund “Cultural Renaissance” and to all contributors.

It is our prayer and wish so that Benevolent God may keep our people under the shadow of His Holy Right Hand, may bless the righteous and faithful undertakings of our sons and daughters for the sake of the prosperity of our Holy Church and the glorification of His Holy Name.

With Blessings,

KAREKIN II
CATHOLICOS OF ALL ARMENIANS

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Հայաստանեայցս սուրբ Եկեղեցւոյ Հասարակաց աղօթիցն յօրինուածութիւնք՝ առ ի սրբոց Հարցն մերոց եւ յերջանիկ Հայրապետաց հինգերորդի ոսկեղենիկ դարուն վայելչագեղ շարամանութեամբ կարգաւորեալք են, եւ ապա ըստ նոցանէ յայլոց ոմանց երանելեաց, եւ յաւէտ ի Շնորհալւոյ Հայրապետէն մերմէ ի Ներսիսէ Կլայեցւոյ պէսպէս երգովք եւ քաղցրանուագ մեղեդեօք պայծառազարդեալք· որք եւ առհասարակ ի ժամագիրսն մեր գանձեալ պահին անկորուստ եւ անյեղլի ըստ բառիցն եւ բանից եւ շարադասութեան։

Ապաքէն ցանկալի իմն էր ամենայն բարեպաշտիկ անձանց՝ ըստ նմին օրինակի անայլայլակս եւ անթերիս գտանել եւ ղեղանակաց երգոցն այնոցիկ խնամոտ պահպանութիւն եւ զգուշաւոր աւանդութիւն· սակայն ժամանակային երկարութեամբ, եւ աղգային աղետից յաճախութեամբ, մանաւանդ՝ որպէս բանիս կարգ է ասել՝ անհաստատութեամբ եւ թերութեամբ խազիցն եւ նշանակաց եղանակաւոր բանից սաղմոսացն այնոցիկ եւ ալէլուից եւ այլոց բազմապատիկ երգաբանութեանց՝ ոչ սակաւ վտիտխութիւնս եւ խանգարմունս կրեալ գտանին ի յոլով տեղիս եղանակքն այնոքիկ։

Եւ թէպէտ Շարականացն անուանելոց երգեցողութիւնք զմեծ մասն ունին զմերոց ժամերգութեանց, եւ միանգամայն բովանդակեն ըստ մասին զերաժշտական արուեստին մերոյ զեղանակս, այլ առանց ժամագրոցն երգոց ձայնագրութեան՝ թերատ իմն եւ անկատար համարելի էր Շարակնոցին եւեթ ձայնագրելոյ հրատարակութիւն, որ եղեւն մտադիւր ջանիւք եւ խնամօք մեծի Հայրապետի Աղգիս Հայոց Տեառն Կէորգայ Դ-ի, Որոյ վասն կամ եղեւ վեհափառ եւ Աղգահնամ Հովուապետի Աղգիս հոգ յանձին ունել՝ զի եւ ժամագրոցն երգք առհասարակ նոյնպէս ձայնագրեսցին եւ ի տիալ արձանացեալ մշտնջենաւորեսցեն յազգիս մերում եւ ծաւալեսցին յընդհանուր եկեղեցիս Հայաստանեայց։

Որ լինչ գհայկականս արուեստ ձայնագրութեան կայցեն գիտելիք կարեւորք՝ աւանիկ ի յառաջաբանի անդ որ ի ձայնագրելումն Շարակնոցի՝ տեղեկագոյնս եղեալ են առաջի, եւ թէ ուստի եւ որպէս յօրինեցան ձայնագրութիւնքն այնոքիկ եւ որով իրաւամբք ընկալան զվաւերականն հաստատութիւն։ Աստանօր մնայ մեզ արդեօք զայս եւ եթէ յաւելուլ՝ իբրեւ յառաւելագոյն բացայայտութիւն առաջիկայ ձայնագրութեան եղանակացն ժամագրոյ թէ նախ՝ զանազանեալն քաղցրաձայնութիւնք երգոց որ ի նոսա՝ ընդելագոյնք գոլով առ հասարակ մանկանց մերոյ եկեղեցւոյս եւ դպրաց եւ քահանայից, եւս եւ ժողովրդականացն մերոց ժամասիրաց, չլցեն թերեւս զարմանք՝ զի եւ քան զՇարականացն եղանակաց ձայնագրութիւնս կարեւոր պիտոյ էր սոցայս կանոնաւոր՝

հաստատուն եւ միօրինակ ձայնագրութեամբ անկորուստ պահպանութիւն։ Ամէն այսմիկ անհրաժեշտ կարօտութեան մերոյն եկեղեցեաց որ ի սիւնիս աշխարհի՝ վոյթ կալեալ Վ.եհափառ Հայրապետիս մերոյ, եւ հեռատես խորհրդով եւ խոհական ազգասիրութեամբ ուշ ի կուրծս եդեալ՝ զի մի՛ եւս ի մոռացութիւն եւ ի խանգարումն գնայցեն որք ի ժամագիրսն մեր ներդաշնակ եղանակաւորութիւնք, հաճեցաւ զհետ Շարականացն հրատարակութեան ի լոյս ընծայել եւ զժամագրոցն երգս։ Երկրորդ, քանզի յոլովք յերգոց անտի ժամագրոցն՝ ոչ միօրինակ կամ միով եւ եթ եղանակաւ պաշտին յեկեղեցիս մեր, այլ է ուրեք զի եւ զայլ լմն ունին եղանակաւորութիւն ոչ նորամուտ, եւ կամ նոյն եղանակք ըստ տօնականացն աւուրց հանդիսաւորութեան պէսպիսանան վայելչապէս, հարկ համարեցաւ Հոգեւոր Տէրս մեր եւ զպէսպիսութիւնս նոցին որիշ ձայնագրութեամբք դնել առաջի, մանաւանդ զգլխաւորագոյնս յերգոց անտի եւ ի սաղմոսերգութեանց, բայց ձայնագրել անթերի զամենայն ինչ՝ որ երգով ասիցի, եւ ոչ ի թիւ, թէպէտ եւ ի յոյժ սղագունիցն իցէ այն ամենայն եւ ի հակիրճ բանից եւ բառից։ Եւ երրորդ, զոր միանգամ՝ ոչ է սովորութիւն եղանակելոյ, որպիսի են Մաղթանքն եւ Աղօթք եւ հանապազորդ Ջարոզք, Մեսեդիք եւ Փոխատացութիւնք այլովքն հանդերձ որք ի Ղեւասին առ մեզ, զայնոսիկ միայն իբրեւ անկարօտս ձայնագրութեան ի բաց թողեալ է ի հրատարակութենէ աստի։

Արդ այսպիսեաւ դիտաւորութեամբ եւ այսու չեղանակաւ ինքնին գլխովին ձեռն արկեալ ի տաժանականս յայս աշխատութիւն, ոչ անխոյեաց մերս Հայրապետ ժամն ձիգս հատանել ի նուիրելոց անտի մեծաւ մասամբ բազմազբաղ եւ հարկեցուցիչ վատուկոյ վեհասեռման պաշտամանն, այլ մտադիւր սիրով հաճեցաւ ինքնուրոյն վերակացութեամբ եւ անխոնջ թելադրութեամբ տալ ձայնագրել զամենայն ըստ ճշգրտագոյն եւ նախնի վաւերական եղանակաւորութեանց երգոցն մերոց ի ձեռն քաջավարժ ձայնագրագէտ դպրաց Մայր Աթոռոյս՝ որք ղեղանակեալսն ի Հայրապետէն ձայնանիշ նաղիւք գրոշմեցին ի քարտիսի։

Բայց որ մեծապէս գիւրէրն եւ թեթեւացուցանէր Վեհափառ Հայրապետիս մերում զծանրատաղտուկս գայս երկասիրութիւն՝ ոչ միայն անշուշտ ակնկալութիւնն էր մեծացն օգտից՝ որոց հետամուտն է յայսմ, որպէս եւ յամենայնի, առ սէր բարեզարդութեան կարգաց Հայաստանեայցս Եկեղեցւոյ, այլ եւ ընտրութիւն եւ քաջոյզ քաղցրաձայնութիւն Նորին Սրբութեան՝ հանդերձ քաջահմուտ տեղեկութեամբ հարազատագոյն եւ ընտրելագոյն երգեցողութեան հասելոյ մինչեւ ի մեր իսկ աւուրս ի ձեռն արանց նախանձաւորաց պայծառութեան կարգաց աստուածպաշտութեան ի մերում Ազգի։

Այսչափ ինչ առ տեղեակս շատ գրելով ասել զայսմ երկասիրութենէ, յաւելորդաց սակի համարեցայ մեզ՝ խրախոյս կարդալ մերազնեայ ազգասիրաց, եւ մանաւանդ առաջնորդաց եւ քահանայից, զի փութով պնդութեան միտ դնիցեն վաղագոյնս որչափ հնար իցէ ծաւալել յեկեղեցիս իւրեանց զդաշնակաւորս զայս եղանակաւորութիւն միօրինակ, եւ միանգամայն պարտուպատշաճ երախտագիտութեամբ առ Վեհափառ Հայրապետս մեր՝ օրհնել եւ փառաւորել զյիշատակ անուան Նորա ազգէ յազգ եւ որդւոց յորդիս։

ԱՌԱՋԱԲԱՆ

Ժամագիրքը, ինչպես հայտնի է, Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու[1] աստվածապաշտությունը կատարելու համար նախատեսված ծիսական գրքերից է[2]: Ծիսամատյանը հայտնի է նաև մեկ այլ՝ Աղոթամատույց անվանումով[3]: Հայ իրականության մեջ ընդունված են եղել նաև այլ եզրեր՝ Աղոթամատյան, Գիրք աղոթից, Սաղմոսարան[4]: Ժամագրքի օտարալեզու հոմանիշներն են՝ Ὡρολόγιον (հուն.)[5], Breviarum (լատ.)[6], Часослов (ռուս.)[7] և այլն:

Հայոց Ժամագրքում հաջորդաբար, ըստ ինը ժամերգությունների՝ Գիշերային, Առավոտյան, Արևագալի, Ճաշու Երրորդ ժամի, Ճաշու Վեցերորդ ժամի, Ճաշու Իններորդ ժամի, Երեկոյան, Խաղաղական և Հանգստյան, ներկայացված է Հայ Եկեղեցու ամենօրյա հասարակաց աստվածապաշտության բազմաժանր, բազմաբնույթ, ծավալուն ողջ ծիսակարգը[8]: Վերջինս նվիրված է *համագո*՝ «Միևնոյն գոյացութիւնն ունեցող, միևնոյն բնութիւնից, <…> Էակից»[9]՝ միասնական և անբաժանելի Սուրբ Երրորդությանը՝ Հորը, Որդուն և Ս. Հոգուն, որոնցից յուրաքանչյուրին ուղղված է երեքական ժամերգություն:

---

1 Հետայսու՝ Հայ Եկեղեցի:

2 **Գիւտ ա. քահանայ Աղանեանց**, Կարգ Աստուածապաշտութեան Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ, Թեհրան, 2010, էջ 65: Նույն նպատակով գործի են դրվում նաև Շարականոցը, Ճաշոցը, Մաշտոցը, Խորհրդատետրը (Պատարագամատույցը) և այլ ծիսական գրքեր. տե՛ս **Նորայր Արք. Պողարեան**, Ծիսագիտութիւն, Նիւ Եորք, 1990, էջ 2:

3 Տե՛ս **Հ. Վարդան Հացունի**, Պատմութիւն հայոց Աղօթամատոյցին, Վենետիկ–Ս. Ղազար, 1965 (հետայսու՝ **Հացունի**):

4 Նույն տեղում, էջ 141, 142:

5 **М. Фасмер**. Этимологический словарь русского языка, т. IV, М., 1987, с. 318.

6 **И. Дворецкий**. Латинско–русский словарь, М., 1976, с. 137.

7 **М. Фасмер**, ук. соч., с. 318.

8 Հարկ է նշել, որ հնում ինը ժամերգությունները կատարվել են ամեն օր: «Այժմ ամեն օր կատարվում են Գիշերային և Առավոտյան ժամերգությունները միասին՝ առավոտյան, և Երեկոյան ժամերգությունը՝ երեկոյան». տե՛ս Ժամագիրք Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2004, էջ Ժ: Մյուս ժամերգությունների կիրառության մասին տե՛ս նույն տեղում, էջ Ժ–ԺԱ:

9 **Ստ. Մալխասեանց**, Հայերէն բացատրական բառարան, հ. 3, Երևան, 1944, էջ 21:

Այսպես, Գիշերային, Ճաշու Վեցերորդ ժամի և Հանգստյան ժամերգությունները կատարվում են «ի դէմս Հօր Աստուծոյ», Առավոտյան, Ճաշու Իններորդ ժամի և Երեկոյան ժամերգությունները՝ «ի դէմս Որդւոյն Աստուծոյ», իսկ Արևագալի, Ճաշու Երրորդ ժամի և Խաղաղական ժամերգությունները՝ «ի դէմս Հոգւոյն Սրբոյ»:

Միաժամանակ, նշված ինը ժամերգություններից յուրաքանչյուրն ունի իր իմաստը՝ կապված հիմնականում Հիսուս Քրիստոսի տնօրինությունների (երկրային կյանքի իրադարձությունների) հետ: Դրանցից են, մասնավորապես, Քրիստոսի երևալը յուղաբեր կանանց (Առավոտյան ժամերգություն), Հարությունը, երևալը աշակերտներին (Արևագալի ժամերգություն) և այլն[10]:

Ժամագիրքը հայոց մեջ անցել է կազմավորման ու զարգացման երկարատև ժամանակաշրջան, որն ընդգրկում է Դ–ԺԳ դարերը[11]: «Պէտք է գիտնալ նախ՝ թէ մեր առաջին Աղօթամատոյցն էր Սաղմոսարանը, անջատուած Կտակարանէն (Հին Կտակարանից – Ա. Բ.)»[12], որ հետզհետե համալրվեց նորաստեղծ, ոչ Սուրբգրային թարգմանական, այլ մայրենի լեզվով հորինված քարոզներով, աղոթքներով, մաղթանքներով[13] և այլն: Ուստի արդեն իսկ Ե դարում հայոց Ժամագիրքը՝ «իր տարրերու տեսակներով՝ նման միւս արեւելեան եկեղեցիներու», միաժամանակ ստացել էր հայկական ուրույն կերպարանք[14], իսկ վերջնական կատարելության հասավ ԺԱ–ԺԳ դարերում[15]:

Ժամագրքի կազմավորման և զարգացման բազմադարյան ընթացքը կապված է Հայ Եկեղեցու ականավոր ներկայացուցիչների արգասավոր գործունեության հետ: Ծիսամատյանի կազմողներն են համարվում Ս. Սահակ և Պարթևը (IV–V դդ.), Ս. Մեսրոպ Մաշտոցը (IV–V դդ.) և նրանց սաները՝ Ս. Գյուտ և Արահեզացին (V դ.), Ս. Հովհան և Մանդակունին (V դ.), իսկ հետագայում նաև՝ Ս. Ներսես Շնորհալին (XII դ.)[16], որոնց անունները բազմիցս զետեղվել են Ժամագրքի տիտղոսաթերթերին՝ հնատիպ նմուշներից մինչև նորօրյա տպագրություններ[17]:

---

[10] Այս մասին մանրամասն տե՛ս Ժամագիրք Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ, էջ ԺԱ–ԺՋ:

[11] Այս ժամանակաշրջանի մանրամասն պարբերացումն ու հանգամանալից դիտարկումը տե՛ս **Հացունի**, էջ 143–281:

[12] Նույն տեղում, էջ 149:

[13] Ձայնագրյալ Ժամագրքում և Առաջաբանում շրջանառվող մի շարք եզրերի բացատրությունը տե՛ս Բառարանում:

[14] **Հացունի**, էջ 182:

[15] Նույն տեղում, էջ 281:

[16] **Ն. Արք. Պողարեան**, նշվ. աշխ., էջ 2:

[17] Տե՛ս, օրինակ, Ոսկան Երևանցու տպագրած Ժամագրքերը՝ 1667 թ., Ամստերդամ, 1673 թ., Մարսել, ինչպես նաև բազմաթիվ այլ հրատարակություններ՝ 1742 և 1793 թթ.՝ Վենետիկ, 1799 և 1813 թթ.՝

Հատկապես Ս. Սահակ և Պարթևին, Ս. Մեսրոպ Մաշտոցին, Ս. Գյուտ և Արահեզացուն և Ս. Հովհան Մանդակունուն է վերագրվում ժամագրքի հիմնական ժանրերից մեկի՝ *երգվող քարոզի* հնագույն օրինակների ստեղծումը: «Քարոզների ներմուծումով փաստորեն նոր փուլ է սկսվում Աղոթամատույցի ազգայնացման գործում և ձևավորվող Ժամագիրքը ստանում է ավելի որոշակի տեսք»[18]: Այդ քարոզներից են՝ Ս. Սահակ և Պարթևի «Վասն ի վերուստ խաղաղութեան», «Վասն ի գիշերի եւ ի տունջեան», «Վասն ուղղելոյ զգնացս մեր», «Վասն գտանելոյ մեզ», Ս. Հովհան և Մանդակունու «Զարթուցեալքս ամենեքեան» (Գիշերային ժամերգություն)[19], Ս. Գյուտ և Արահեզացու «Յարեւելից մինչեւ ի մուտս արեւու, ընդ ամենայն տեղիս» (Արևագալի ժամերգություն)[20] և այլն:

Սահակ–Մեսրոպյան դպրոցը մեծ ներդրում է ունեցել ոչ միայն քարոզագրության ասպարեզում: Սուրբ Թարգմանիչների ջանքերով հիմնվել են նաև ժամագրքի ծիսաարարողակարգային՝ նույնպես խիստ կարևոր նշանակության մի շարք ժանրեր՝ աղոթքներ (որոնք սովորաբար հաջորդել և կցվել են քարոզներին), մաղթանքներ, կցուրդներ (շարականների նախատիպեր) և այլն:

Ժամագրքում ընդգրկվել են Ս. Գրիգոր և Լուսավորչին (III–IVդդ.) վերագրվող «Աստուած մեծ, հզօր եւ փառաւորեալ» քարոզը (Առավոտյան ժամերգություն)[21], հատվածներ Ս. Գրիգոր Նարեկացու (X–XI դդ.) «Մատեան ողբերգութեան» երկից, այդ թվում՝ «Ընկալ քաղցրութեամբ, Տէր Աստուած հզօր» աղոթքը (Հանգստյան ժամերգություն)[22], ինչպես նաև Հովհաննես Սարկավագ Իմաստասերին (XI– XII դդ.), Գրիգոր Տաթևացուն (XIV–XV դդ.), Թովմա Մեծոփեցուն (XIV–XV դդ.) և այլոց վերագրվող մի շարք կտորներ[23]:

Ծիսամատյանը զգալիորեն համալրվել և հարստացել է Ս. Ներսես Շնորհալու գործունեության շնորհիվ: Մեծ Հայրապետը ստեղծել է շուրջ երկու տասնյակ երգ գրե-

---

Կ. Պոլիս, 1881 և 1915 թթ.՝ Երուսաղեմ, 1902 թ.՝ Վաղարշապատ և այլն:

18 **Ա. Արևշատյան**, Քարոզի ժանրը հայ հոգևոր երգաստեղծության մեջ, «Պատմա–բանասիրական հանդես», Երևան, 1992, թիվ 2–3, էջ 202:

19 Ս. Հովհան և Մանդակունուն են վերագրվում նաև Ճաշու Երրորդ, Վեցերորդ, Իններորդ ժամերի քարոզները (**Հացունի**, էջ 164): Ս. Սահակ և Պարթևի և Ս. Հովհան և Մանդակունու քարոզների երաժշտաոճական հատկանիշների վերլուծությունը տե՛ս **Ա. Արևշատյանի** նշված հոդվածում:

20 **Ն. Արք. Պողարեան**, նշվ. աշխ., էջ 3:

21 Նույն տեղում:

22 Նույն տեղում:

23 Նույն տեղում, էջ 5 և 6:

թե բոլոր ժամերգությունների համար (բացառությամբ Երեկոյան ժամերգության)[24], այդ թվում՝ «Յիշեսցուք ի գիշերի»; այբբենական ծայրակապով (ակրոստիքոսով)՝ «Այսօր անձառ», «Աստուած անեղ», «Աշխարի ամենայն», «Առաւօտ լուսոյ», «Արարչական», իր անվան ծայրակապով՝ «Նորոգող տիեզերաց», «Նորաստեղծեալ», «Նայեաց սիրով» և այլն, ինչպես նաև «Հաւատով խոստովանիմ» աղոթքը՝ «օրուան ժամերուն թիւով՝ 24 տուն, ընտիր եւ գերազանց բովանդակութեամբ»[25]:

Հայոց Ժամագրքի անբաժանելի մասերից են համաքրիստոնեական երգասացությունները.

1. «Սուրբ Աստուած» երեքսրբյան աղոթքը, որն օրվա խորհրդին համապատասխան («յաւուր պատշաճի»)՝ Հայ Եկեղեցում գործի է դրվում տասը տարբերակով՝ ա) Ավետյաց և Ս. Ծննդյան, բ) Տյառնընդառաջի և Ծաղկազարդի, գ) Ս. Զատկի, դ) Հոգեգալստյան և այլն, որոնց կցվում է Ս. Թովմաս առաքյալին վերագրվող «Փառաւորեալ եւ օրհնեալ միշտ Սուրբ Կոյս Աստուածածին Մարիամ» մաղթանքը (Առավոտյան ժամերգություն),

2. «Փառք ի բարձունս Աստուծոյ» (Առավոտյան ժամերգություն),

3. «Լոյս զուարթ» (Երեկոյան ժամերգություն), որ «շատ հին երգ մըն է, կիրակամտի հատուկ, հունական ծագումով»[26], Ս. Հովհան Ա Մանդակունու թարգմանությամբ[27]:

Ժամագրքում ամփոփված է Հայ Եկեղեցու ծիսաարարողակարգային ժանրերի գրեթե ողջ բազմահարուստ համակարգը՝ Տերունական աղոթք, սաղմոս, աղոթք, քարոզ, փոխ, մաղթանք, կանոնագլուխ, թագավոր, ալելու, ստողոգի, կցուրդ, երգ, հորդորակ, ծիսական բացականչություն (*օրթի, պռօսխումէ, ալէլուիա*) և այլն, որոնք գրեթե բոլորը ժամերգությունների ընթացքում ավանդաբար կատարվում են երգեցողության միջոցով[28]: Ուստի և դրանք միաժամանակ հայ եկեղեցական երաժշտության տարատեսակներից են՝ յուրաքանչյուրն իր ուրույն ծիսաարարողակարգային գործառույթով, կառուցվածքով, բանաստեղծական և մեղեդիական նկարագրով, կատարման ձևով,

---

[24] Նույն տեղում, էջ 4:

[25] Նույն տեղում, էջ 5:

[26] Նույն տեղում, էջ 23:

[27] **Մ. Աբեղյան**, Հայ հին գրականության պատմություն, գիրք առաջին (սկզբից մինչև X դար). տե՛ս Երկեր, հ. Գ, Երևան, 1968, էջ 396:

[28] Ժամագիրքը Հայ Եկեղեցու՝ գրեթե ամբողջությամբ երգվող ծիսական գրքերից է, ինչպես և Խորհրդատետր–Պատարագամատույցը, Մաշտոցը և այլն:

որոնք նաև հնուց ի վեր բազմիցս ձայնագրվել են[29], ընդ որում՝ երաժշտության ձայնագրության տարբեր համակարգերով: Սկզբնապես, միջնադարում, այդ նպատակով գործի է դրվել խազագրությունը, XIX դարում՝ հայկական նոտագրությունը[30]:

1877 թ. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ամենայն Հայոց Կաթողիկոս Գևորգ Դ–ի[31] նախաձեռնությամբ, հովանավորությամբ և հրամանով հայկական նոտագրությամբ լույս տեսավ «Երգք ձայնագրեալք ի Ժամագրոց Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ» հատորը[32]: Երգել է հենց ինքը՝ Վեհափառ Հայրապետը, ձայնագրել (նոտագրել) են պոլսահայ երաժիշտ, հայկական նոտագրության և հայ եկեղեցական երաժշտության հմուտ գիտակ Նիկողայոս Թաշճյանը (1841–1885) և իր սաները, որոնց թվում էր նաև երիտասարդ Մակար Եկմալյանը[33]:

«Երգք ձայնագրեալք ի Ժամագրոց» հատորը հայ ավանդական՝ մոնոդիկ, միաձայն եկեղեցական երաժշտության բազմաժանր[34], ստվարածավալ ձայնագրյալ ժողովածուներից է[35]: Ինչպես 1870–ական թվականներին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում լույս տեսած «Ձայնագրեալ երգեցողութիւնք Սրբոյ Պատարագի» և «Ձայնագրեալ Շարական հոգեւոր երգոց» հատորները, «Երգք ձայնագրեալք ի Ժամագրոց»–ը ևս առանձնանում է երաժշտական նյութի առավել ամբողջականությամբ և ոճական մաք-

---

[29] Հայ եկեղեցական երաժշտությունը, ի տարբերություն բանավոր ավանդույթ ունեցող հայ ժողովրդական և աշուղական երաժշտության, գրավոր ավանդույթի երգարվեստ է:

[30] Հայկական նոտագրությունը ոչ գծային նոտային համակարգ է: Ստեղծվել է XIX դ. սկզբին Կոստանդնուպոլսում: Հաջորդել է խազագրությանը: Հեղինակն է համարվում պոլսահայ երաժիշտ Համբարձում Լիմոնջյանը (1768–1839), որի անունով հայկական նոտագրությունը հայտնի է որպես *Լիմոնջյանի համակարգ, Համբարձումյան խազեր*: Նախատեսվել է հայ ավանդական (միաձայն) եկեղեցական երաժշտության ձայնագրության համար, ըստ այդմ կոչվում է նաև *Եկեղեցական ձայնագրություն հայոց, Հայկական եկեղեցական ձայնագրություն:*

[31] Գևորգ Դ Կոստանդնուպոլսեցի. գահակալության տարիներն են՝ 1866–1882 թթ.:

[32] Նույն տարիներին Մայր Աթոռում հայկական նոտագրությամբ լույս տեսան նաև «Ձայնագրեալ երգեցողութիւնք Սրբոյ Պատարագի» (1874 թ.՝ առաջին հրատ., 1878 թ.՝ երկրորդ հրատ.), «Ձայնագրեալ Շարական հոգեւոր երգոց» (Ձայնագրյալ Շարակնոց, 1875 թ.), և հայ եկեղեցական երաժշտության այլ հատորներ:

[33] Ժամագրքի ձայնագրության մասին տե՛ս **Ղազարոս քհյ. Յովսէփեան**, Յուշիկներ հայկական երգեցողութիւնից, «Գեղարուեստական ալբօմ Յ. Կ. Այվազովսկու յիշատակին», Ս.–Պետերբուրգ, 1903, էջ 62–65:

[34] Բազմաժանր է նաև «Ձայնագրեալ երգեցողութիւնք Սրբոյ Պատարագի» հատորը՝ ի տարբերություն «մոնոժանր» (միաժանր) «Ձայնագրեալ Շարական հոգեւոր երգոց» հատորի, որում ամփոփված են միայն շարականներ:

[35] Հարկ է նշել, որ Ձայնագրյալ Ժամագրքում, հատկապես մեղեդիական բարդ նկարագրով եղանակավոր նմուշներում, հանդիպում են նաև երկձայնության օրինակներ, որոնք գոյանում են երգի մեղեդու և վերջինիս ուղեկցող վոկալ ձայնառության (դամի) միջոցով. տե՛ս էջ 408, 412, 816, 818:

րությամբ[36]: Հատորում ընդգրկված է Հայ Եկեղեցու ամենօրյա ինը ժամերգությունների ողջ եղանակավոր (երգվող) նյութը[37], որի մի մասն, ընդ որում, ներկայացված է «յաւուր պատշաճի» մեղեդիական տարբերակներով՝ երկու, երբեմն և ավելի՝ նախատեսված եկեղեցական տարբեր տոների և օրերի համար[38]: Դրանցից են՝ «Առաւօտ լուսոյ» (Վասն հանդիսաւոր կիւրակէից, էջ 38; Ի հասարակ կիւրակէս Յարութեան, էջ 66; Ի կիւրակէս Մեծի Պահոց, էջ 72; Յաւագ Ուրբաթու եւ ի տօնս Խաչի, էջ 79), «Փառք ի բարձունս Աստուծոյ» (Ի հանդիսաւոր աւուրս, էջ 574; Վասն հասարակ աւուրց, էջ 580) և այլ երգեր:

Ձայնագրյալ ժամագիրքը համապարփակ կերպով և լավագույնս արտացոլում է հայ ավանդական եկեղեցական երաժշտության ժանրային և հորինվածքային (կոմպոզիցիոն) բազմաբովանդակ նկարագիրը՝ դրանով իսկ դառնալով ազգային երգարվեստի այս հնագույն մասնագիտացված (պրոֆեսիոնալ) ճյուղի յուրօրինակ հանրագիտարանը[39]: Այստեղ ներառված են հայ եկեղեցական երաժշտության գրեթե բոլոր ժանրերը: Միաժամանակ ներկայացված են՝ հայկական Ութձայն համակարգը՝ ութ մայր (հիմնական) ձայնեղանակները և դրանց դարձվածքները, այդ ձայնեղանակների բազմապիսի ձայնակարգերը (լադերը)՝ մաժոր, մինոր թեքման, հեմիոլ (մեծացրած սեկունդայով), որոնք պարունակում են բնական, իսկ դրանց մի մասը՝ բնականի հետ մեկտեղ, նաև բարձր և ցածր հնչյուններ[40]: Մասնավորապես, վերջիններիս միջոցով զգալիորեն ընդարձակվում է ժամագրքի մեղեդիների ինտերվալային կազմը: Դասական ինտերվալների կողքին մեծ տեղ ունեն «անսովոր» կառուցվածքով ինտերվալները՝ նեղ փոքր սեկունդան (ԴԿ)՝ e̋[1]-f[1], լայն մեծ սեկունդան (ԴԿ)՝ d[1]-e̋[1], լայն մեծացրած սեկունդան (ԴՁ II դարձվածք)՝ des[2]-e̋[2] և այլն[41]: Ժամագրքում ներկայացված են նաև

---

36 **Н. Тагмизян**. Теория музыки в древней Армении, Ереван, 1977, с. 8.

37 Ժամագրքի հրատարակությունում ընդգրկված չեն շարականները և Ս. Պատարագի երգերը, որոնք, ինչպես վերը հիշատակվեց, 1870–ական թվականներին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում լույս տեսան առանձին ձայնագրյալ հատորներով (տե՛ս ծանոթ. 32):

38 Մեղեդիական տարբերակներն ի հայտ են գալիս, երբ անփոփոխ պահպանվում է երգի բանաստեղծական տեքստը, սակայն փոխվում է երաժշտական բաղադրիչը: Երևույթը բնորոշ է հայ եկեղեցական երաժշտությանը:

39 Գրեթե նույնը կարող ենք ասել նաև «Ձայնագրեալ երգեցողութիւնք Սրբոյ Պատարագի» հատորի մասին. տե՛ս «Ձայնագրեալ երգեցողութիւնք Սրբոյ Պատարագի», փոխադրություն հայկական նոտագրությունից եվրոպականի, Երևան, 2012, «Խմբագրի կողմից», էջ 340–341:

40 Բարձր և ցածր հնչյունների մասին տե՛ս էջ XIX-XX:

41 Բարձր և ցածր հնչյուններն, ընդհանրապես, բնորոշ են հայ եկեղեցական երաժշտությանը. տե՛ս «Ձայնագրեալ երգեցողութիւնք Սրբոյ Պատարագի», «Ձայնագրեալ Շարական հոգեւոր երգոց» հատորները և այլն: «Անսովոր» կառուցվածքով ինտերվալների մասին հայ ավանդական մոնոդիկ՝

հայ եկեղեցական երաժշտության մեղեդիական բոլոր ոճերը՝ *վանկային, ներվանկային, զարդոլորուն և խառը*[42]: Դիտարկված մեղեդիական ոճերով է պայմանավորված հայ եկեղեցական երաժշտության բոլոր տեմպերի առկայությունը՝ Յորդոր (Allegro), Միջակ (Moderato), Չափաւոր (Andante), Ծանր (Adagio)[43]: Արտացոլված են նաև հայ եկեղեցական երաժշտության կատարողական բոլոր կերպերը՝ խմբակային, մենակատարային և փոխեփոխ:

«Երգք ձայնագրեալք ի Ժամագրոց» ներկա հատորը հարստագույն նյութ է բովանդակում հայ եկեղեցական երաժշտությունը հետազոտողի համար: Միաժամանակ, այս հատորից, որպես ստեղծագործական ներշնչանքի անսպառ աղբյուր, կարող են օգտվել թե՛ կատարողները, թե՛ կոմպոզիտորները: Այն կարող է գործի դրվել նաև ուսումնառության գործընթացում երաժշտական (և ոչ միայն) ուսումնական տարբեր հաստատություններում: Ձայնագրյալ Ժամագրքի սույն հրատարակությունը նախատեսված է երաժիշտների, ինչպես նաև բոլոր նրանց համար, ովքեր հետաքրքրվում են հայ եկեղեցական երաժշտությամբ և որոնց հասու է եվրոպական նոտագրությունը:

* * *

«Երգք ձայնագրեալք ի Ժամագրոց Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ» հատորի ներկա փոխադրությունը հայկական նոտագրությունից եվրոպականի՝ կատարվել է

ժողովրդական, ժողովրդա–մասնագիտացված (գուսանական, աշուղական) և մասնագիտացված (հոգևոր և աշխարհիկ) երաժշտության մեջ՝ տե՛ս **Х. С. Кушнарев**. Вопросы истории и теории армянской монодической музыки, Л., 1958, сс. 332–335. նույնի հայերեն թարգմանությունը՝ **Ք. Քուշնարյան**, Հայ մոնոդիկ երաժշտության պատմության և տեսության հարցեր, Երևան, 2008, էջ 279–281:

[42] *Վանկային կամ սիլաբիկ* մեղեդիական ոճը գոյանում է «մեկ վանկ – մեկ հնչյուն» հարաբերակցության միջոցով. տե՛ս, օրինակ, Ներսես Շնորհալու «Այսօր անճառ» երգի մեղեդիական տարբերակներից մեկի գերակշռող մասը (էջ 204–218): Ձայնագրյալ Ժամագրքում, հատկապես սաղմոսներին, բնորոշ է վանկային մեղեդիական ոճի այն ձևը, որը գոյանում է նույն հնչյունի բազմակի, շարունակական կրկնության միջոցով (տե՛ս էջ 1–12, 155–176 և այլն): *Ներվանկային կամ նևմատիկ* մեղեդիական ոճը հիմնված է «մեկ վանկ – 2-5 հնչյուն» հարաբերակցության վրա (տե՛ս «Թագաւոր յաւիտեան... Գրիգորի Լուսաւորչին...[եւ այլ սրբոց]», էջ 421–425), *զարդոլորուն կամ մելիզմատիկ* ոճի դեպքում վանկը եղանակավորվում է ծավալուն մեղեդիական ֆրազի միջոցով (տե՛ս «Թագաւոր յաւիտեան... Ս. Ստեփաննոսի Նախասարկաւագին...», էջ 408–421), *խառը* մեղեդիական ոճը գոյանում է մեղեդիական տարբեր ոճերի համակցությունից, օրինակ՝ վանկայինի և ներվանկայինի (խառը՝ վանկային–ներվանկային, տե՛ս էջ 460–469), ինչը խիստ բնորոշ է Ժամագրքի եղանակավոր նմուշներին (ինչպես նաև շարականներին), կամ ներվանկայինի և զարդոլորունի (խառը՝ ներվանկային–զարդոլորուն, տե՛ս էջ 470–472 և այլն):

[43] *Յորդոր և Միջակ* տեմպերով երգվում են վանկային մեղեդիական ոճով ծավալվող եղանակավոր նմուշները, *Չափաւոր* տեմպը հատուկ է խառը վանկային–ներվանկային ոճին, *Ծանրը*՝ ներվանկային, զարդոլորուն, խառը՝ ներվանկային–զարդոլորուն ոճերին:

Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի Հայ երաժշտական ֆոլկլորագիտության ամբիոնում, «Հայկական նոտագրություն» առարկայի դասերին, կոնսերվատորիայի երաժշտագիտական և կոմպոզիտորական բաժինների ուսանողների կողմից, տողերիս հեղինակի ղեկավարությամբ: Ժամագիրքը փոխադրելիս առաջնորդվել ենք հետևյալ սկզբունքներով.

1. Հայկական նոտագրության «փուշ» հնչյունը (♩) փոխադրել ենք որպես եվրոպական նոտագրության «դո»՝ առաջնորդվելով Էջմիածնում 1870–ական թվականներին ընդունված սկզբունքով[44]:

2. Հրաժարվել ենք տակտավորումից՝ հարազատ մնալով բնագրին: Միաժամանակ, երգերի տներն իրարից առանձնացրել ենք եվրոպական նոտագրության տակտի գծով, իսկ երգերի վերջում գործածել ենք եվրոպական նոտագրության «ավարտանիշը»՝ զույգ գծերի միջոցով:

3. Ի տարբերություն եվրոպական նոտագրության, ալտերացիայի նշանները նոտային տեքստում (տակտավորման բացակայության պայմաններում՝ շփոթից խուսափելու նպատակով) դնում ենք նաև այն դեպքում, երբ այդ նշանները կրկնվում են գրեթե իրար հետևից. օրինակ՝



Երգք ձայնագրեալք ի Ժամագրոց, էջ 66:

Փոխադրություն, էջ 113:

---

[44] Գոյություն ունի նաև «փուշը = ռե» սկզբունքը: Այս երկու սկզբունքների և հայկական նոտագրության ստեղծումից հետո դրանց շուրջ XIX դարում Կոստանդնուպոլսի հայ երաժիշտների շրջանում ծավալված հակամարտության վերաբերյալ տե՛ս **Ն. Թահմիզյան**, Կոմիտասը և հայոց հոգևոր երգարվեստի ուսումնասիրության հարցերը, «Կոմիտասական» (հոդվածների ժողովածու), հ. 1, Երևան, 1969, էջ 171–177:

4. Երբ հնչյունը ալտերացված է քառորդ տոնով, ապա օգտագործում ենք հետևյալ պայմանական նշանները.

ա) քառորդ տոն բարձրացումը նշում ենք աստղանիշով «★». օրինակ՝



Երգք ձայնագրեալք ի Ժամագրոց, էջ 64:



Փոխադրություն, էջ 109:

Աստղանիշով նշված և քառորդ տոն դեպի վեր ալտերացված առաջին օկտավայի «մի»–ն այս դեպքում կոչվում է «բարձր մի», որը երգելիս կարելի է հավասարեցնել եվրոպական հավասարաչափ տեմպերացված հնչյունաշարի առաջին օկտավայի բնական «մի»–ին:

բ) քառորդ տոն իջեցումը նշում ենք թեք գծով՝ « / », որը դրվում է իջեցված նոտայի ձախ կողմում. օրինակ՝



Երգք ձայնագրեալք ի Ժամագրոց, էջ 28:



Փոխադրություն, էջ 38:

Թեք գծով նշված է քառորդ տոն դեպի ներքև ալտերացված երկրորդ օկտավայի «դո»–ն, որը կոչվում է «ցածր դո»: Այս հնչյունը երգելիս կարելի է վերարտադրել որպես եվրոպական հավասարաչափ տեմպերացված հնչյունաշարի երկրորդ օկտավայի «դո»:

5. Ձայնեղանակների և տեմպերի ցուցիչները բերված են ըստ բնագրի:

6. Պահպանել ենք Ձայնագրյալ Ժամագրքում շրջանառվող հապավումների և եզրերի բնագրային (գրաբարյան) ուղղագրությունը[45]:

Մեր երախտագիտությունն ենք հայտնում երաժշտագետ–միջնադարագետ, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Մհեր Նավոյանին՝ արժեքավոր դիտողությունների և խորհուրդների համար, որոնք հաշվի ենք առել և գործի դրել:

Անահիտ Բաղդասարյան
արվեստագիտության թեկնածու

[45] Ձայնագրյալ ժամագրքի երգային միավորների տեքստերը համեմատել ենք բազմաթիվ հին և նոր տպագիր Ժամագրքերի, Շարակնոցների, Սաղմոսաց գրքերի հետ, որի արդյունքում հայտնաբերել ենք որոշ վրիպակներ և ուղղել դրանք: Միակերպության ենք բերել միևնույն երգային միավորի՝ մի քանի տարբերակներում առկա երկգրությունները: Հազվադեպ հավելել ենք նաև կետադրական նշաններ (Ծանոթ. խմբագրի – Ա. Մ.):

PREFACE

The Breviary (Book of Hours, *Ժամագիրք – Žamagirk'*), as it is known, is one of the ritual books for the Divine Worship[1] of the Armenian Apostolic Holy Church[2]. The ritual book is also known by the name of *Աղօթամատոյց* (Prayer Book)[3]. Other terms, such as *Աղօթամատեան* (Prayer Book), *Գիրք աղօթից* (Book of Prayers) and *Սաղմոսարան* (Psalter)[4] were also used in Armenian reality. The synonyms of the foreign languages for the word *Breviary are Ὡρολόγιον* (Greek)[5], *Breviarium* (Latin)[6], *Часослов* (Russian)[7], etc.

All the multi-genre, multi-character, voluminous order of rites of the daily common worship of the Armenian Church is represented successively in the Armenian Breviary, according to the nine Offices: Night, Morning, Sunrise, Midday Third Hour, Midday Sixth Hour, Midday Ninth Hour, Evening, Peace and Rest[8]. The order of rites is dedicated to the consubstantial[9], one and indivisible Holy Trinity: the Father, the Son and the Holy Spirit.Three Offices are addressed each of them. Thus, the Night, Midday Sixth Hour and the Rest Offices are served "in the person of God the Father"; the Morning, the Midday Ninth Hour and the Evening Offices are served "in the person of God the Son", and the Sunrise, the Midday Third Hour and the Peace Offices are served "in the person of Holy Spirit".

---

1 **Archpriest Gyut Aghanyants**. *Order of the Divine Worship of the Holy Church of Armenia*. Tehran, 2010, p. 65 (in Armenian). The *Šaraknoc'* (Hymnal), the *Čašoc'* (Lectionary), the *Maštoc'* (Ritual), the *Xorhrdatetr* or *Pataragamatuyc'* (Missal) and other ritual books are used for the same purpose. See **Archbishop Norayr Bogharyan**. *Study on the Ritual.* New York, 1990, p. 2 (in Armenian).

2 Henceforth: The Armenian Church.

3 **Father Vardan Hatsuni**. *History of the Armenian Prayer Book.* Venice, San Lazzaro, 1965 (in Armenian) (henceforth: **Hatsuni**).

4 *Ibid.*, pp. 141, 142.

5 **M. Fasmer**. *Etymological Dictionary of the Russian Language*. Moscow, 1987, vol. IV, p. 318 (in Russian).

6 **I. Dvoretsky**. *Latin-Russian Dictionary.* Moscow, 1976, p. 137 (in Russian).

7 **M. Fasmer**, op. cit., p. 318.

8 It should be mentioned that in ancient times all the nine Offices were served every day. "Now, every day, the Night and the Morning Offices are served together – both in the morning, and the Evening Office – in the evening". See *The Breviary of the Holy Church of Armenia.* Mother See of Holy Etchmiadzin, 2004, p. X (in Armenian). About the use of the other Offices, see *ibid.*, pp. X-XI.

9 "<…> Having the same substance and the same nature, coexistent". See **S. Malkhasyants**. Armenian Dictionary, vol. 3, Yerevan, 1944, p. 21 (in Armenian).

Meanwhile, each of the mentioned nine Offices has its signification, mostly related to the life events of Jesus Christ. Among them, particularly, there are the Apparition of Christ to the Myrrhophores (Morning Office), the Resurrection, the Apparition of Christ to the disciples (Sunrise Office), etc.[10]

The Breviary has passed through a long period of formation and evolution in the Armenian history, between the 4th and the 13th centuries[11]. "First, it should be known that our first Prayer Book was the Psalter, separated from the Testament (the Old Testament – A.B.)"[12], which was progressively completed by newly created sermons, prayers, *małt'ank's*[13], etc., not through Scriptural translations, but composed in native language. So, already in 5th century, the Armenian Breviary, "was similar by the types of its elements to the Breviaries of other Eastern Churches", getting at the same time a special Armenian character[14]. It has achieved its highest perfection between the 11th -13th centuries[15].

Over many centuries, the formation and evolution of the Breviary is related to the fruitful activities of the famous representatives of the Armenian Church. The compilers of the Armenian Breviary are considered to be St. Sahak I Parthev (4th-5th centuries), St. Mesrop Mashtots (4th-5th centuries) and their disciples: St. Gyut I Arahezatsi (5th century), St. Hovhan I Mandakuni (5th century) and later also St. Nerses Shnorhali (12th century)[16], whose names are mentioned many times on the title pages of the Breviary, beginning from the old-published samples to the modern editions[17].

The creation of the most ancient examples of the singing *k'aroz* (pl. *k'arozk'*), one of the main genres of the Breviary, is especially attributed to St. Sahak I Parthev, St. Mesrop Mashtots, St. Gyut I Arahezatsi and St. Hovhan I Mandakuni. "In fact, with the insertion of the *k'aroz*, a new period begins in the act of the nationalization of the

---

10 For more details about this, see *The Breviary of the Holy Church of Armenia,* pp. XI-XVI.

11 For the detailed periodicity and examination of this epoch, see **Hatsuni**, pp. 143-281.

12 *Ibid.*, p. 149.

13 See the explanations of some terms of the *Notated Breviary* and the *Preface* in the *Dictionary*. The Latin transcription of the terms is done according to the system of Hübschmann-Meillet-Benveniste.

14 **Hatsuni**, p. 182.

15 *Ibid.,* p. 281.

16 **Archbishop Norayr Bogharyan**, op. cit., p. 2.

17 See, e.g., the Breviaries published by Voskan Yerevantsi in 1667, Amsterdam; in 1673, Marseille; also many other editions in 1742 and 1793, Venice; in 1799 and 1813, Constantinople; in 1881 and 1915, Jerusalem; in 1902, Vagharshapat, etc.

Prayer Book and the evolving Breviary gets a more definite shape"[18]. Among these are *k'arozk'* written by:

a) St. Sahak I Parthev:

1. *"Let us beg the Lord for the peace from above and salvation of our souls".*
2. *"Let us beg the Lord so that He says to us the Word of Lord every hour during the night and day".*
3. *"Let us beg the Lord for guiding our steps on the way of peace".*
4. *"Let us beg the Lord so that grace and mercy are found for us by our Beneficent Lord"*[19].

b) St. Hovhan I Mandakuni[20]:

Having Arisen, All of Us (Night Office),

c) St. Gyut I Arahezatsi [21]:

From the East to the West, in All Places (Sunrise Office).

The school of St. Sahak and St. Mesrop had a great contribution not only in the field of the *k'aroz* writing. Several ritual and ceremonial genres of the Breviary – also having much importance – were invented by the efforts of the Saint Translators: prayer (in Arm. *ałot'k'* which was usually followed the *k'aroz* or was attached to it), *małt'ank'* and *kc'urd* (archetype of the *šarakan*), etc.

The Breviary contains the *k'aroz O God, Great, Mighty and Glorified* (Morning Office), attributed to St. Gregory the Illuminator (3th-4th centuries)[22], extracts from the *Book of Lamentation* by St. Grigor Narekatsi (10th-11th centuries), including the prayer *Accept with Sweetness, Lord God Almighty* (Rest Office)[23], as well as several other fragments attributed to Hovhannes Sarkavag Imastaser (11th-12th centuries), Grigor Tatevatsi (14th-15th centuries), Tovma Metsopetsi (14th-15th centuries), etc[24].

The Breviary was considerably completed and enriched thanks to St. Nerses Shnorhali's efforts. The great Catholicos created almost twenty chants nearly for all the Offices (except the Evening Hour)[25]: *Let us Recall in the Night*; with alphabetic acrostic –

---

[18] **A. Arevshatyan**. *The Genre of the k'aroz in the Armenian Sacred Music,* "Historical and Philological Review", Yerevan, 1992, n. 2-3, p. 202 (in Armenian).

[19] The incipits of Sahak Parthev *k'aroz*es are translated from Classical Armenian into English by G. Muradyan.

[20] The *k'arozk'* of the Third, the Sixth and the Ninth Hours are attributed to St. Hovhan I Mandakuni (see **Hatsuni**, p. 164). For the analysis of the musical and stylistic characteristics of the *k'arozk'*, written by St. Sahak I Parthev and St. Hovhan I Mandakuni, see **A. Arevshatyan**, op. cit.

[21] **Archbishop Norayr Bogharyan**, op. cit., p. 3.

[22] *Ibid.*

[23] *Ibid.*

[24] *Ibid.,* p. 5-6.

[25] *Ibid.,* p. 4.

This day Ineffable, *Uncreated God*, *The Entire World*, *Morning of Light, Creative*; with the acrostic of the author's name – *Renovating of the Universe*, *Newly-Created*, *Look with Love*, etc., as well as the prayer *I Confess with Faith,* "twenty-four verses according to the numbers of the hours of the day, with excellent and exquisite content"[26].

All-Christian chants are the inseparable parts of the Armenian Breviary. Those are:

1. *Holy God* or *The Trisagion* (Thrice Holy), an ancient prayer accomplished in the Armenian Church in ten variants, according to the mystery of the day, devoted to: a) the Annunciation and the Nativity of our Lord, b) the Presentation of Jesus at the Temple and the Palm Sunday, c) the Holy Easter, d) the Pentecost, etc. Later the *małt'ank' Glorified and Blessed Ever Holy Virgin, Mariam Theotokos,* composed by the Apostle Thomas, was added to them (Morning Office).

2. *Δόξα ἐν ὑψίστοις Θεῷ – Glory to God in the Highest* (Morning Office).

3. *Φῶς ἱλαρόν – O Joyful Light,* which "is a very old chant, special for the Sunday Eve, having Greek origins"[27] and translated by St. Hovhan I Mandakuni[28] (Evening Office).

Almost the entire plentiful series of the ritual and ceremonial genres of the Armenian Church are included in the Breviary: the Lord's prayer, psalm (in Arm.: *sałmos*), prayer, *k'aroz*, *p'ox, małt'ank'*, *kanonaglux*, *T'agawor*, *alēlu*, *stołogi, kc'urd*, *erg*, *hordorak*, ritual exclamations *(ōrt'i, pṙōsxumē, allēluia*), etc., almost all of which are traditionally served by singing during the Offices[29]. Consequently, they are the varieties of the Armenian Church music, at the same time, each of them has its special ritual and ceremonial function, structure, poetic and melodic style and performance form. They have also been notated many times since the oldest period[30], moreover, with different systems of notation. Firstly, the *xaz* notation was used for this purpose in the Middle Ages, then, in the 19th century, the Armenian notation[31].

---

[26] *Ibid.*, p. 5.

[27] *Ibid.*, p. 23.

[28] **M. Abeghyan**. *History of the Armenian Ancient Literature,* book 1 (from the beginning till 10th century). *Complete Works,* vol. III, Yerevan, 1968, p. 396 (in Armenian).

[29] The Breviary is one of the entirely chanting ritual books of the Armenian Church, as well as the *Pataragamatuyc'*, the *Maštoc'*, etc.

[30] Unlike the Armenian folk and *ashughs*' music, which has oral tradition, the Armenian Church music is a vocal art of written tradition.

[31] The Armenian notation is a notation system without lines. It was created at the beginning of the 19th century in Constantinople. It followed the *xaz* notation. The author is considered to be Hambartsum Limonjyan (1768-1839), an Armenian musician from Constantinople. By his name, the Armenian notation is known as *Limonjyan system* or *Hambartsumian xazer*. It was foreseen for the notation of the Armenian traditional (monodic) Church music and is called *Armenian Church notation*.

In 1877 by the initiative, order and support of His Holiness Gevorg IV, Catholicos of all Armenians[32], the volume *Notated Chants from the Breviary of the Armenian Holy Church* was published with Armenian notation in the Mother See of Holy Etchmiadzin[33]. It was sung by His Holiness the Catholicos himself and notated by Nicoghayos Tashjyan (1841-1885), an Armenian musician from Constantinople, a great connoisseur of the Armenian notation and Armenian Church music, and his disciples, the young Makar Yekmalyan[34] among them.

The volume *Notated Chants from the Breviary* is one of the multi-genre[35], voluminous notated miscellanies of the Armenian traditional monodic Church music[36]. As the books *Notated Chants of the Holy Liturgy* and *Notated Šarakan*, published in the 1870s in the Mother See of Holy Etchmiadzin, the book *Notated Chants from the Breviary* is also distinguished with the totality of the musical matter and its stylistic purity[37]. The volume includes the entire chants of the daily nine Offices of the Armenian Church[38], a part of them, by the way, is presented with two or, sometimes, more melodic variants 'as convenient' (i.e. according to the meaning of the day), foreseen for different Church feasts and days[39]. Among them one should mention the *Morning of Light (*on solemn Sundays, p. 38; on ordinary Sundays of the Resurrection, p. 66; on the Great Lent Sundays, p. 72; on Holy Friday and the Feasts of the Holy Cross, p. 79), *Glory to God in the Highest* (on solemn days, p. 574; on ordinary days, p. 580) and other chants.

The *Notated Breviary* reflects finely and completely the compositional comprehensive character and the genres of the Armenian traditional Church music, so becoming a specific encyclopedia of this ancient professional branch of the national vocal

---

[32] Gevorg IV of Constantinople, Catholicos from 1866 to 1882.

[33] In the same year, in the Mother See of Holy Etchmiadzin the *Notated Chants of the Holy Liturgy* (First Edition in 1874, Second Edition in 1878), the *Notated Šarakan* (1875) and other volumes of the Armenian Church music were published.

[34] About the notation of the Breviary see **Priest Ghazaros Hovsepyan**. *Memories from the Armenian Chanting*, "Artistic Album in memory of H. C. Ayvazovsky", St.-Petersburg, 1903, pp. 62-65 (in Armenian).

[35] The *Notated Chants of the Holy Liturgy* is multi-genre volume, unlike the mono-genre volume *Notated Šarakan*, in which only *šarakan*s are included.

[36] It should be mentioned that in the *Armenian Notated Breviary*, especially among the samples with melodic complicated character, one could find examples written in two-part texture, which arise due to the junction of the melody of the chant and its vocal bass-counter accompaniment (see pp. 408, 412, 816, and 818).

[37] **N. Tahmizyan**. *The Theory of Music in Ancient Armenia*. Yerevan, 1977, p. 8 (in Russian).

[38] The *šarakan*s and the liturgical chants are not included in the edition of the Breviary. As it was mentioned above, they were published in separate notated volumes in the 1870s in the Mother See of Holy Etchmiadzin (see annotation 33).

[39] The melodic variants appear when the poetic text of the chant remains the same while the melody changes. This phenomenon is characteristic for the Armenian Church music.

art[40]. Almost all the genres of the Armenian Church music are collected here. At the same time, the *Armenian Utʿ-jayn* (Eight-mode) system is presented, i. e. the eight main modes and their *darjvackʿ* (auxiliary) modes, the various types of modes: major, minor, hemiola (with augmented second), some of which contain natural sounds; some others also contain high and low sounds, alongside with natural once[41]. Especially through the high and low sounds, the melodic interval construction of the Breviary has been considerably enlarged. Side by side with the classical intervals there are several intervals with 'unusual' structure: narrow minor second (Fourth Side Mode) – ḕ¹-f¹, wide major second (Fourth Side Mode) – d¹-ḕ¹, wide augmented second (II *darjvackʿ* of the Fourth Mode) – des²-ḕ², etc.[42]

All the melodic styles of the Armenian Church music are presented in the *Notated Breviary: syllabic, intra-syllabic, melismatic and mixed*[43]. The presence of all the musical tempos of the Armenian Church music is conditioned by the mentioned melodic styles: Allegro, Moderato, Andante and Adagio[44]. All the performance forms of the Armenian Church music: group, solo and antiphonal, are reflected as well.

The present volume of the *Notated Chants from the Breviary* contains rich material for researchers of the Armenian Church music. At the same time, it can be used as an inexhaustible source of the creative inspiration both by the performers and by the composers. It can also be used as manual during the educational process in diverse musical

---

[40] We can also say almost the same about the volume *Notated Chants of the Holy Liturgy*. See *Notated Chants of the Holy Liturgy,* transcribed from the Armenian notation into the Western musical notation, Yerevan, 2012, "By the editor", pp. 340-341 (in Armenian).

[41] About high and low sounds see p. XXVIII.

[42] As a rule, high and low sounds are characteristic to the Armenian Church music. See the volumes Notated Chants *of the Holy Liturgy*, *Notated Šarakan*, etc. About the intervals with 'unusual' structures in the Armenian traditional monodic music: folk, folk-professional (*gusan*s' and *ashugh*s') and professional (sacred and secular), see **K. Kushnarev**. *Issues of the Armenian Monodic Music History and Theory*. Leningrad, 1958, pp. 332-335 (in Russian); the Armenian translation of the same book: **K. Kushnaryan**. *Issues of the Armenian Monodic Music History and Theory*. Yerevan, 2008, pp. 279-281 (in Armenian).

[43] The syllabic melodic style appears from the relation 'one syllable – one sound': see, e.g., the main part of one of the melodic variants of the chant *This day Ineffable* by Nerses Shnorhali (pp. 204-218). In the *Notated Breviary* this form of syllabic melodic style, especially is characteristic for the psalms, appears through the numerous and continuous repetition (pp. 1-12, 155-176, etc.). The intra-syllabic or neumatic melodic style appears through the motive consisting of 'one syllable and 2-5 sounds': see *Tʿagawor hawitean... To St. Gregory the Illuminator...* [and to other Saints] (pp. 421-425). The melismatic style appears from the relation of one syllable and a voluminous melodic phrase: see *Tʿagawor hawitean... To St. Stephen the Archdeacon...*(pp. 408-421). The mixed melodic style appears through the combination of diverse melodic styles, for instance, syllabic and intra-syllabic (pp. 460-469), which is very characteristic for the singing samples of the *Breviary* (as well as, the *šarakan*s), or through the combination of intra-syllabic and melismatic styles (pp. 470-472, etc.).

[44] The samples of the syllabic melodic style are sung in Allegro or Moderato. The tempo Andante is special to the mixed syllabic–intra-syllabic style, the tempo Adagio is used to sing in the mixed intra-syllabic–melismatic style.

(and not only) colleges. This edition of the *Notated Breviary* is addressed to the musicians, as well as to all those who are interested in the Armenian Church music and who are acquainted with the Western musical notation.

* * *

